ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման դիտարկումը տարրական դասարաններում, դասավանդման առավել մատչելի և արդյունավետ ուսուցման օրինակների վերլուծություն սեփական փորձից

Հետազոտող ուսուցիչներ՝ Մերի Թովմասյան

Մարինե Պողոսյան

Աբովյանի կրթահամալիր

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման դիտարկումը տարրական դասարաններում.....4

Գլուխ 2. «Ես շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման առավել մատչելի և արդյունավետ օրինակների դիտարկումը սեփական փորձից.....6

Գլուխ 3. Հեքիաթային պատկերացումները և իրականությունը ես և շրջակա աշխարհը առարկայի ուսուցման շրջանակներում.....7

Գլուխ 4. Ամփոփման դասն ընթերցանությունից.....12

Եզրակացություն.....16

Օգտագործված գրականության ցանկ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ես և շրջակա աշխարհը առարկան բավականին լայնածավալ և տարաբնույթ բնագավառներ ներառող ուսումնական առարկա է ,որի նպատակնէտարրական դասարանների աշակերտներին ծանոթացնել իրենց շրջապատող աշխարհին:Այնուամենայնիվ երեխաները ամեն օր առիթ են ունենում ուսումնասիրելու, վերլուծելու, հետազոտելու այն ամենը ,ինչ իրենց շրջապատում է,սակայն այս առարկայի ներդրումը տարրական դասարաններում հնարավորություն է ընձեռնում, որպեսզի աշակերտները առավել գրագետ, ճշգրտորեն և մանրակրկիտ ուսումնասիրեն շրջակա միջավայրը: Այս առարկայի ուսուցումը տարրական դասարաններում նպաստավոր պայմաններ է նախապատրաստում միջին և ավագ դասարաններում այնպիսի ուսումնական առարկաների ուսուցման համար ինչպիսիքն են աշխարհագրությունը, աստղագիտությունը, հասարակագիտությունը, քիմիան, ֆիզիկան, պատմությունը: Ես և շրջակա աշխարհը առարկայի շրջանակներում արծածված շատ թեմաներ հետագայում հանդիպում են նշված առարկաները ուսումնասիրելիս, այսինքն աշակերտները արդեն որոշակի առումով տեղեկացված են լինում ,ուղղակի միջին և ավագ դասարաններում նշված թեմաները առավել խորապես են ուսումնասիրում:

Հետազոտության նպատակը: Հետազոտական աշխատանք գրելու մեր նպատակը ես և շրջակա աշխարհը առարկայի շրջանակներում բխում է այն հանգամանքից, որ սեփական փորձից ունենալով ցայտուն և հաջողված օրինակների նմուշներ դիտարկումների և վերլուխությունների արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ այս առարկան պետք է հիմնականում կրի ավելի շատ գործնական բնույթ:

Հետազոտության մեթոդական հիմքը: Հետազոտությունը շարադրելիս կիրառվել են զրույցի, դիտման, դիտարկման մեթոդները: Ես և շրջակա աշխարհը առարկայի շրջանակներում զետեղված թեմաների մեծամասնությունը առավել արդյունավետ հնարավոր է իրականացնել էքսկուրսիաների, դիտական արշավների, գործնական աշխատանքների,էլեկտրոնային դասերի, տեսաֆիլմերի, ՏՀՏի, միջոցառումների,

ցուցահանդեսների,թանգարաններայցելությունների, դիդակտիկ նյութերի առկայության պարագայում:

Հետազոտության կառուցվածքն և ծավալը: Հետազոտությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. «ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հարկ ենք համարում անդրադառնալ այն հանգամանքին, որ տարրական դասարաններում ես և շրջակա աշխարհ առարկայի դասագրքերում որոշ թեմաների ընդգրկվածությունը բավականին ծավալուն է, դժվարամատչելի, անհետաքրքիր և ոչ արդյունավետ 6-9 տարեկան երեխաների իմացական մակարդակի համար:Հնարավորության սահմաններում կարելի է վերանայել դասագրքերի բովանդակությունը, թեմաների ծավալը, դասագրքերը բեռնաթափել մի շարք թեմաններից, ընդգրկել այնպիսի թեմաներ, որոնք ավելի հետաքրքիր են և որոնք կնպաստեն շրջակա միջավայրը ճանաչելու ,վերաիմաստավորելու, արժևորելու հմտությունների ձևավորմանը:Առաջարկում ենք այս առարկայի շրջանակներում ներառել այնպիսի թեմաներ, որոնք կնպաստեն հայեցի դաստիարակությանը, կձևավորեն այնպիսի հատկանիշներ՝ ինչպիսիքն են բարությունը, հայրենասիրությունը, քաջությունը, միասնականությունը, աշխատասիրությունը, ազնվությունը, հոգատարությունը՝ միմյանց նկատմամբ :Կարելի է ընդգրկել նաև այնպիսի թեմաներ, որոնք վերաբերվում են այլ երկրների ժողովուրդների բարքերին և ավանդույթներին,ազգային յուրահատկություններին ,շրջակա միջավայրի պահպանությանը, միաժամանակ զուգահեռներ անցկացնելով մեր ազգայինի հետ:Ցանկալի է ընդգրկել նաև հետևյալ բովանդակությամբ թեմաներ՝ «Ինչպես օգնեմ հայրենիքիս», «ինչպես կարող եմ շենացնել երկիրս» , «ինչպես հարստանալ» , «Ինչ է հարստությունը», «Ինչպես օգնել կարիքավորներին», «Ինչպես պահպանել բնությունը» , «Ինչ անել հաջողության հասնելու համար», «Որ մասնագիտություններն են առավել եկամտաբեր և պահանջված», «Սեր , հարգանք և հոգատար վերաբերմունք մեծահասակների նկատմամբ», «Քաղաքավարության կանոններ» : Դասագրքերում նպատակահարմար կլինի նաև ներառել այնպիսի մեթոդական ցուցումներ, որոնք կօգնեն դասվարին ավելի մատչելի ներկայացնել օրվա դասը:Այս եզրակացությանը հանգել ենք հիմք ընդունելով սեփական փորձը մեր աշխատանքային տարիների ընթացքում և փորձառու դասվարների հետ համատեղ քննարկումների արդյունքները:

ԳԼՈՒԽ 2. «ԵՍ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՎԵԼ ՄԱՏՉԵԼԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՓՈՐՁԻՑ

4-րդ դասարանի Ես շրջակա աշխարհը առարկայի դասագրքում զետեղված «Ես և հասարակությունը բաժինը» ամփոփել եմ գեղեցիկ և թերևս աշակերտների համար անմոռանալի միջոցառման տեսքով ,որը տեղի է ունեցել հունիսի 1-ին՝երեխաների միջազգային տոնին ընդառաջ:Միջոցառմանը ընդգրկված են եղել այնպիսի թեմաներ, ինչպիսիքն են՝ «Իրավունք և պարտականություն», «Ժողովրդական հասարակություն», «Իրավունքների շուրջ ծագած հակամարտություններ» , «Ինչպես ճիշտ հաղորդակցվել», «Կարծրացած ըմկալումներ: Հանդուրժողականություն» , «Փոփոխությունները մարդու կյանքում», «Մենք և ապագան»: Վերլուծելով կատարված աշխատանքի արդյունքները ՝ միջոցառման շրջանակներում լուծվել են մի շարք ուսումնադաստրարակչական խնդիրներ: Բաժնում զետեղված շատ թեմաներ ներկայացվել են դերային խաղերի ,բանավեճերի օգնությամբ,երգ ու պարի,խաղերի ուղեկցությամբ, յուրաքանչյուր աշակերտ ներկայացրել է իր բաժին խոսքը՝սահուն ,արտահայտիչ և ամենակարևորը այս ամեն իրականացվել է բարձր տրամադրությամբ և պատասխանատվության մեծ զգացումով,ոչ մի աշակերտ անտեսված չի եղել:Միջոցառման ավարտից հետո կատարել եմ դիտարկումներ որոշակի ժամանակահատվածում : Վերլուծելով դասարանիս աշակերտների բարոյահեգեբանական կարգավիճակը եկել եմ այն եզրակացության,որ նրանք դարձել են առավել հանդուրժող միմյանց նկատմամբ, դարձել են ընկերասեր,տարբերակում են իրեց իրավունքները պարտականություններից:

Այս միջոցառումը վառ ապացույցն է այն հանգամանքի,որ դասագրքում զետեղված թեմաների ուսուցումը, որպեսզի չանցկացվեն միապաղաղ, անհետաքրքիր և ձանձրալի և թեմաները առավել արդյունավետ և նպատակային ուսուցանվեն, աշակերտների շրջանում համապատասխան մոտիվացիա առաջացնելու համար կարելի է մի շարք բաժինները ամփոփել բաց դաս-

միջոցառումների տեսքով,կարելի է նաև կազմակերպել նախագծային աշխատանքներ բաժինների ամփոփման ժամանակ:

ԳԼՈՒԽ 3. ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ և ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հեքիաթը ուսումանդաստիարակչական աշխատանքների շղթայում իր ծանրակշիռ տեղն ունի: Այն մանավորապես նպաստում է մանկական երևակայության խթանմանը, հետաքրքասիրության զարգացմանը և ընթերցանական ունակության մշակմանը: Հեքիաթի ընթերցանությունն այդ ամենից բացի շոշափում է նաև մանկական աշխարհայացքի ձևավորման սաղմերը: Հեքիաթներում անխուսափելիորոն գործ ենք ունենում բազմաթիվ փաստերի և երևույթների հետ, որոնք կամ մնում են անմարսելի, կամ երեխաներին մղում են դեպի անըմբռնելի խորհրդավորությունը: Շատ դեպքերում մենք մինչև հիմա պարզապես ի վիճակի չենք եղելճիշտ մեկնաբանել հեքիաթային իրողությունները և շրջանցել ենք դրանք կամ գտնելով հեշտ ճանապարհ, վերագրել ենք հեքիաթների հեղինակի՝ ժողովրդի անգիտությանը, միամտությանը, խավարամտությունից ծնվող նրա մտածելակերպին և գերբնական ուժերի ընդունմանը: Անշուշտ այս ամենը հեքիաթներում իրավամբ իրենց արտացոլումն ունեն, և այլ կերպ էլ չէր կարող լինել: Դրա պատճառը մարդկության իմացության զարգացման ընթացքում աշխարհը ընկալելու, ճանաչելու, և մեկնաբանելու ձգտումն է: Այնտեղ, որտեղ մարդը խեղճացել է իրականորեն վերծանելու գաղտնիքներն ու առեղծվածները, հրաշքայինն ու զարմանալին, ապավինել է խորհրդատվությանը: Այսպիսի երևույթների մեծ մասը, հարկավ, արդյունք է երևակայության, մարդկային մտքի ստեղծագործական որոնումների ու թռիչքի, ապագայի սպասելիքների ու հույսերի: Իսկ մի մասը վերաբերում է այնպիսի բաների, որոնք այսօր պահանջում են նոր մոտեցում, նոր մեկնաբանում: Ըստ էության դրանք այն բաներն են, որոնք վերաբերվում են աշխարհի ու կյանքի վաղ ժամանակների ձևերին ու մարդկության հիշողության փոխանցումն են ,ինչպես նաև հեքիաթներին համապատասղանող ժամանակներին վերաբերվող իրողությունների արձանագրումը, ինչպես աստվածաշնչում՝ աշխարհի ու մարդկության պատմությունը: Այս ամենն անհրաժեշտ է տարբերել ու սահմանազատել:Գործ ունենալով մարդկային մտքի չմարմնավորված գյուտերի, ստեղծագործական երևակայության պտուղների հետ; անհրաժեշտ է ցույց տալ,որ դրանք մասամբ կատարվել են և դեռ կկատարվեն հետագայում:ՈՒ մարդն էլ ժողովրդի պես պիտի

երազի , պատկերի,ձգտի և հասնի: Գործ ունենալով պատմական դեպքերի ու փաստերի հետ հարկավոր է գաղափար տալ դրանց մասին,իբրև եղած- անցած բաների և ասել,թե ի՞նչն է հիմա դրանց փոխարեն, ի՞նչ պատճառով են դրանք վերացել՝ կապելով կյանքի դիալեկտիկայի,փոփոխման ու զարգացման օրինաչափությունների հետ: Գործ ունենալով միստիկականի հետ՝ պետք է առանձնացնել այն և բացահայտել դրա արմատներն ու հետևանքները: Սակայն մենք գործ ենք ունենում նաև այնպիսի բաների հետ ,որոնք առաջին հայացքից մտացածին են թվում, հորինված, երևակայական, չափազանցված,մինչդեռ պարունակում են իրականության տարրեր: Դրանցում լինում են այնպիսիները, որոնք ռեալական, բայց մոռացված ու անհետացած կամ դեռևս առկա, բայց հազվադեպ և ձևափոխված,բնաբնույթ վաղնջական վիճակից բավական հեռացած բաներ են,որոնք մինչև հիմա այդ տեսակետից ի նկատի չեն ունեցվել: Դրանք պետք է արժանացնել պատշաճ ուշադրության, համարձակորեն բացատրել՝ արժանին հատուցելով ճշմարտությանը,առանց գաղափարական գռեհիկաբանության:Հեքիաթներում այդ կարգի բաները շատ են:Այստեղ իմաստուն ասելով ոչ միայն պետք է ըմբռնել խելացի, փորձառու,հասկացող, այլև՝ բառիս ուղղակի իմաստով: Դա պետք է ընդունել որպես մտավոր կարողություն, իհարկե՝ բնատուր,ինչպես տաղանդը, հանճարը, ստեղծագործական երևակայությունը,որ բերում է գյուտեր ու հայտնագործություններ և այլն:Իմաստությունն ինչ-որ տեղ մոտենում է գուշակության կարողությանը, բայց չի միանում:Նույնը պիտի ասել նաև ինտուիցիայի վերաբերյալ: Օրինակ, երբ մարդը հասկանում է, որ իր ետևից ինչ-որ մեկը գալիս է, թեև չկա զգայական հաղորդակցությունը, դա իմանալու այն տեսակն է , որը պետք է համարել իմաստնություն: Երբ կույրը հասկանում է, որ իր առջև պատնեշ կա և դրա համար չկա ոչ մի հոգեբանաֆիզիոլոգիական ռեցեպտոր, դա պարզապես իմաստնություն է: Երբ մարդը հանկարծ հասկանում է, թե ուր պիտի լինի կորած կամ իր պահած առարկան՝ առանց հիշողության կամ ասոցիատիվ որևէ հանգամանքի, դարձյալ իմաստնություն է : Նույնն է նաև այն,որ առանց կենսահոսանքի գործոնի իմանում է, որ հեռու-հեռվում գտնվող իր որդուն փորձանք է պատահել կամ թե «սև թուղթը» ճակատից եկել է, բայց հասկանում է, որ նա կենդանի է և այլն:Սրանք դրա մասնակի դրսևորումներն են, որ կարող են այս կամ այն չափով հանդես գալ յուրաքանչյուրի մոտ:Նախկինում եղել են այդ ընդունակությամբ ֆենոմենալ կերպով

օժտված մարդիկ, որոնք դարձել են արքունական ,մտել հեքիաթների մեջ:Այդ հատկությունը հատուկ է ոչ միայն մարդուն ,այլ կենդանի արարածին առհասարակ: Գիտենք,որ կկուն է ձվեր ածում ուրիշի բնում: Դրանցից դուրս եկած ճուտը բնից դուրս է նետում բնի տիրոջ իսկական ճուտերին, որպեսզի մայրը չզգա իրենց խորթությունը և չվտարի:Երբ օձը շանը խայթում է, նա գնում է, որոնում և գտնում այն բույսը,որ սպեղանի է և ուտելով փրկվում : Երբ շանը կամ կատվին տանում են տասնյակ կիլոմետրերով հեռու զցում, որ կորչի, բայց նա վերադառնում է տուն՝չունենալով տիրոջ հոտին հետևելու կամ ճանապարհը մտապահելու հնարավորությունը: Ձին զգում է մոտալուտ վտանգը և հատուկ խռոցով տիրոջը զգուշացնում: Դեղձանիկի ճուտը անհրաժեշտ նյութի առկայության դեպքում, չունենալով օրինակը,կարողանում է բույն շինել և այն էլ մարդուց առավել վարպետությամբ: Շերամի որդը հարսնյակավորման ժամանակ կերտում է բոժոժը, թրթուրավորվելով նրա մեջ: Թռչնի ձագերը սեղմվում են բնին,երբ վերևում բազե է թռչում, իսկ այլ թռչունի դեպքում՝ ոչ: Բոլոր պարագաներում հիշյալ կենդանիները չունեն նախափորձ և չեն ստացել համապատասխան դաս իրենց ծնողներից: Այս ամենը ընդունված է համարել բնազդ: Բայց դա այն արտահայտությունն է ,որ բխում է ռեալ իմացության պակասությունից, ինչպես աստվածը:Դա վերծանել.դրա ֆիզիոլոգիահոգեբանական մեխանիզմը ցույց տալ հնարավոր չէ և ոչ ոք չի արել : Կարիք չկա թաքնվել բնազդի ետևում: Պետք է ընդունել,որ դա պարզապես իմաստնություն է, ուղեղի մի որակ, մատերիայի հատկանիշներից մեկը, և դժվար է փնտրել նրան երեք նեյրոնային բջիջների մեջ: Հեքիաթներում հանդիպում ենք այնպիսի դեպքերի,երբ մարդը հասկանում է կենդանիներին, իշխում նրանց վրա, համագործակցում նրանց հետ:Դա պիտի ըմբռնել 8 ժամանակակից բիհեվիորիզմի տեսանկյունից և զուգահեռ տանել գազաններին սանձահարողների և նրանց միջև: Պետք է նկատի ունե- նալ նաև այն հանգամանքը,որ հեքիաթային ժամանակներում մարդ արարածը դեռ շատ չէր հեռացել կենդանական աշխարհից և ավելի շուտ էր մերձենում նրանց : Մարդը ֆիլոգենեզում հեռանալով կենդանական աշխարհից, կատարելագործվելով, մտավորապես կտրվելով բնությունից և բնական ընտրությունից անցնելով բնական ընտրությանը՝ գոյության պայքարում դիմանալու համար, բիոլոգիորեն հարմարվելու փոխարեն ,հարմարվելով սոցիոլոգորեն, կորցրեց հոտառության ,տեսողության, լսողության նախկին կարողությունները՝ այդ բաներում զգայապես ետ մնալով

կենդանիներից:Անտարակույս հեքիաթներում մարդ-կենդանի կապակցությունների մեջ առկա է չափազանցություն, որը, սակայն,բնական է,ինչպես սովորական գրական հիպերբոլան, և դա այդպես էլ պետք է ներկայացվի: Հեքիաթներում իրենց տեղն են գտել կենդանիների նախատիպերը է բազմագլուխ դևը, երախից բոց ժայթքող վիշապը, հուշկապարիկը,անճոռնի հրեշը և այլն: Հեքիաթներում ամենուրեք սփռված են 3,7,40 թվերը,համարյա չկա հեքիաթ ,որում դրանք չլինեն : Միշտ եղբայրները երեքն են լինում , բախտորոշ խոսքը երեք անգամ է կրկնվում,ճակատագրական գործողությունը երորդն է , դեպի նպատակը գնացող հերոսին երեք ճանապարհ է պատահում,երեք խոյեր են հանդիպում ,դևերը 3 կամ 7 գլխանի են լինում, հարսանիքը միշտ 7 օր 7 գիշեր է տևում, սպասման ժամկետը 40 օր է դրվում և այլն: Այս թվերը գործնական կիրառություն ունեն և ժողովրդի կյանքում ու կենցաղում: Անմիջապես կատարվելիք գործողության համար հաշվում են մինչև 3-ը ,հավաքվում ու հանգուցյալի գերեզմանին են այցելում 7-ն ու 40-քը լրանալիս և այլն : Երեխան հարցասեր է .նա անտարբեր չի անցնում ոչ մի բանի կողքով .ուզում է ամեն ինչ իմանալ: Եվ դա բնական է , որովհետև նա նոր է աչք բաց անում աշխարհի վրա և նրան ամեն ինչ հետաքրքրում է, ապրում է աշխարհաճանաչողության ամենաինտեսիվ փուլում: Փոքրերը շատ հաճախ են հարցերով դիմում մեծերին, բայց միշտ չէ, որ բավարար, մատչելի համոզիչ պատասխան են ստանում .երբեմն էլ անպատասխան են մնում,իսկ դա բթացնում է նրանց հետաքրքրասիրությունը,և նրանք աստիճանաբար ընտելանում են այն մտքի հետ ,թե ամեն ինչ չէ ,որ կարելի է հասկանալ, ու դա պատճառ է դառնում նրանց իմացական պրոցեսի պասիվացման:Կասկածից դուրս է,որ վերը նշված հանգամանքը իր վրա կհրավիրի փոքրիկի ուշադրությունը և նրան պիտի բացատրություն տալ դրա մասին.ինչ խոսք, որ առանց դրա էլ ուսուցիչը պարտավոր է հեքիաթների հետ կապված դրանց մասին տալ անհրաժեշտ մեկնաբանություններ:Բայց միշտ չէ,որ դա արվում է և միշտ չէ,որ ճիշտ է արվում: Անշուշտ այդ թվերը կապված են աստվածաշնչի,կրոնի հետ: Երեքը գալիս է սուրբ երրորդությունից.-հայր սուրբ,որդին սուրբ,հոգին սուրբ,և օրհնելիս էլ հոգևոր հայրերը խաչակնքում են իրենց աջի երեք մատով:Յոթը կապված է աստծո արարչագործության հետ.ավետարանը վկայում է ,որ աստված աշխարհն ստեղծեց վեց օրում և թվարկվում է,թե որ օրը՝ ինչը, ու յոթերորդ օրը հանգստացավ: 40-ը կապված է աստվածաշնչի այն հայտնության հետ,որ Քրիստոսը խաչվելուց 40 օր

հետո հարություն առավ ու համբարձվեց:Սակայն հարցը միայն դրանով չի սահմանվում : Բանն այն է, որ թե՛ քառասունի,թե՛ մյուսների արմատները ավելի խորն են գնում:Դրանք առկա են նաև այլ 9 աղբյուրներում, ինչպես օրինակ առաջին շումերական էպոս «Գիլգամեշում», կամ վերաբերում են հեթանոսական շրջանին:

Ուրեմն՝ դուրս է գալիս, որ դրանց հիմքը ավելի շուտ և ավելի շատ մատերիալիստական է, քան իդեալիստական և դրանց վերլուծությունն ու մեկնաբանումը լոկ մետաֆիզիկական հայեցակետից ճիշտ չէ կամ այնքան էլ ճիշտ չէ:Դրանք մնում են բնության այլևայլ բազմաթիվ գաղտնիքների ու առեղծվածների շարքում,որոնք կբացահայտվեն ժամանակակից աստղաֆիզիկայի, բյուրեղաբանության, երկրաբանության, բջջաբանության, հյուլեաբանության, բիոքիմիայի և գիտության մյուս ճյուղերի ջանքերով ոչ հեռու ապագայում. նյութի գաղտնիքները սպառվել չեն կարող, գիտությունը կանգ առնել չի կարող, բայց այդ գաղտնիքները ժամանակավոր են, իսկ իմացության ուղին՝ անվախճան:

Գ .Քոչարյանի գրադարանից

ԳԼՈՒԽ 4. ԱՄՓՈՓՄԱՆ ԴԱՄՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

2-4-րդ դասարանների ես և շրջակա աշխարհը դասարանի ընթերցարաններում նյութերը տրված են թեմատիկ խմբավորումներով:Թեմատիկ խմբի ուսումնասիրությունն ավարտվում է ամփոփումով, որին ծրագրով առանձին դասաժամ է հատկացվում:

Թեմայի ամփոփումը հնարավորություն է տալիս անցած ստեղծագործությունների շուրջ անցկացվող համեմատությունների ու հակադրությունների միջոցով ընդհանրացումներ ու եզրահանգումներ կատարել,գեղագիտական, գաղափարական, բարոյական ու ճանաչողական հետևություններ անել:

Որպեսզի թեմայի ամփոփումը բարձր մակարդակով տարվի, անհրաժեշտ է,որ աշակերտները խորությամբ յուրացնեն թեմայի մեջ մտնող առանձին ստեղծագործությունները, ուսումնասիրեն թեմայի հետ կապված օժանդակ և լրացուցիչ նյութերը:Ամփոփման նպատակով տրված հարցերը պետք է անպայման ընդհանուր լինեն,որոնք հնարավորություն կտան եզրահանգումներ ու ընդհանրացումներ անելու:

Երբ աշակերտները դժվարանում են, հիմնական կամ գլխավոր հարցերը պարզաբանելու նը- պատակով առաջադրվում են նաև լրացուցիչ կամ օժանդակ,հուշող հարցեր:

Ամփոփման ժամանակ հիմնական հարցերից մեկը պետք է լինի ինչո՞ւ հարցը, որը ոչ միայն երեխաներին կստիպի թափանցել անցած նյութերի էության մեջ,այլև պայմաններ կստեղծի ինքնուրույն դատողություններ անելու, իր վերաբերմունքը ցույց տալու տվյալ դեպքի, գործողության,հերոսի նկատմամբ:

Ներկայացնում ենք թեմայի ամփոփման երեք դաս,որոնք, մեր կարծիքով,հատկապես սկսնակ ուՃսուցիչներին կարող են ճիշտ կողմնորոշել:

«Թավշյա հեղափոխություն» (II դաս.) թեման ծավալուն է և ունի դաստիարակչական մեծ նշանակություն :

Թեմայի ամփոփմանը պետք է նախապատրաստվել դեռևս թեմատիկ խմբի նյութերն ուսումնասիրելիս:

Յուրաքանչյու նյութ անցնելիս պետք է առաջարկել նկարել տվյալ ստեղծագործության բովանդակության համապատասխան նկար:Նման աշխատանքը նպաստում է նյութի խոր յուրացմանը և երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացմանը:Ստեղծագործական բնույթի այսօրինակ

աշխատանքները աշակերտներին ստիպում են ուշադիր լինել շրջապատի նկատմամբ,տեսնել ամեն ինչ, հատկապես ուշադրություն դարձնել այն գեղեցկությունների վրա,որոնցով շրջապատված է նա,և հարկ եղած դեպքում վերարտադրել այդ բոլորը (նկարելով կամ պատմելով):

Թեմայի ամփոփմանը նախապատրաստվելիս պետք է հանձնարարել նաև ձեռք բերել պատրաստի նկարներ՝ Թավշյա հեղափոխությանը և նշանավոր հեղափոխություններին նվիրված:

Մինչև թեմայի ամփոփումը պետք է կահավորել դասարանը: Դասարանի կենտրոնական մասում փակցվում է թեմայի անվանումը՝խոշոր տառերով գրված:

«Թավշյա հեղափոխություն» թեման կարելի է ներկայացնել 3ենթաբաժիններով.

1.Հեղափոխությունիցառաջ

2.Հեղափոխություն 3. Հեղափոխությունից հետո

Կարելի է դասի որոշ ժամանակահատված տրամադրել թեմայի մեջ մտնող նյութերի կրկնընթերցմանը՝ ընտրելով այնպիսի հատվածներ,որոնց մեջ ցայտուն արտահայտված են հեղափոխության նպատակները:

Ուուցիչը կհարցնի, թե թեմայի մեջ մտնող ո՞ր նյութերն են հատկապես դուր եկել աշակերտներին և ինչո՞ւ:Աշակերտները կթվարկեն դուր եկած ստեղծագործությունները,կպատճառաբանեն,կհամեմատեն տարբեր ստեղծագործությունների գործող անձերի արարքները և կանեն որոշակի հետևություններ:

Նկարների վերլուծության ժամանակ պետք է ուշադրություն դարձնել մանրուք թվացող,բայց չափազանց կարևոր մի հարցի վրա՝յուրաքանչյուրը ամենից առաջ պետք է վերլուծի իր նկարածը,որովհետև այստեղ նա ամեն մի կետի,գծի տակ որոշակի բան է հասկանում:

«Թավշյա հեղափոխություն» նկարների 1-ին բաժինը կպատկերի կյանքը հեղափոխությունից առաջ:Այս բաժնի նկարները կդրսևորեն դասագրքում եղած և արդեն ուսուցված ստեղծագործությունների բովանդակությունը:

2-րդ բաժինը կպատկերի հեղափոխության ընթացքը,որտեղ կներկայացվեն Նիկոլ Փաշինյանն և ուրիշներ:

3-րդ բաժնի նկարները կպատկերեն մեր օրերը:Կլինեն նկարներ երեխաների ուրախ առօրյայից,ճամբարներից ,զբոսայգիներից:

Առանձին վահանակով կներկայացվեն երեխաների ստեղծած նկարները՝ «Թավշյա հեղափոխության թեման երեխաների աչքերով»:

Թեմայի ամփոփման համար կարելի է ունենալ նաև ձայնագրություններ,երգեր նվիրված մանուկներին,դպրոցին,ծնողներին:

Ամփոփումը կարելի է սկսել երգով, որից հետո թեմայում ընդգրկված նյութերի շուրջը տարբեր տիպի աշխատանքներ կազմակերպել:

Կարելի է անցած ստեղծագործություններից որոշ հատվածներ կրկին ընթերցել տալ, պատմել որոշ պատմվածքներ կամ բանաստեղծություններ արտասանել:Անհրաժեշտ է իմանալ որ ստեղծագործություններն են ավելի շատ դուր եկել երեխաներին և ինչո՞ւ:

Ամփոփման դասերին կարելի է կազմակերպել նաև խաղեր:Այս թեմայի ամփոփման համար է հետևյալ խաղը. գրատախտակին փակցնել թռչունների նկարներ և հարցնել,թե որոնք են չվող,որոնք՝ձմեռող:Այնուհետև կանչել երկու աշակերտի և հանձնարարել վաղօրոք խառնած նկարներից առանձնացնել չվող և ձմեռող թռչունների նկարները: Խաղը շահում է այն աշակերտը,որը ավելի շուտ է կատարում առաջադրանքը:

Այս խաղը ոչ միայն թարմացնում ,աշխուժացնում է երեխաներին ,այլև ճանաչողական նշանակություն ունի ,երեխաները ճանաչում են չվող ու ձմեռող թռչուններին:Իհարկե,այստեղ պետք է զրուցել նաև,թե ինչպես պահպանել,օգնել թռչուններից,որպեսզի նրանք ցրտից չսատկեն :Ամեն մի պատեհ առիթով բնության պահպանության հարցերին պետք է անդրադառնալ:

Թեմայի անցմանը զուգահեռ երեխաները սովորում են բազմաթիվ հանելուկներ:

Բառային աշխատանքին նույնպես պետք է ժամանակ տրամադրել, վերհիշեցնելով նոր սովորած բառերն ու արտահայտությունները:

Ջ. Ստեփանյանի գրադարանից

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծությամբ եկել ենք հետևյալ եզրահանգումների.

- Ես և շրջակա աշխարհը առարկայի դասագրքերում զետեղված մի շարք թեմաներ բավականին ծավալուն և դժվարամատչելի են կրտսեր դպրոցականների իմացական մակարդակի համար:
- Սեփական աշխատանքային փորձից վերցված հաջողված դասերի օրինակները կարող են նպաստել սովորողի ստեղծագործական, հաղորդակցական, ինքնուրույն գործունեության,կարողությունների, հմտությունների,արժեքային համակարգի ձևավորմանը, դաստրարակել բարոյական որակներ, բարձրացնել ուշադրությունը,առաջադիմությունը, զարգացնել հիշողությունը, շրջակա աշխարհը ճանաչելու նպաստավոր պայմաններ ստեղծել:
- «Հեքիաթային պատկերացումները և իրականությունը Ես և շրջակա աշխարհը առարկայի ուսուցման շրջանակներում» թեմայի ուսումնասիրությունը պայմանավորված է այն համանքով, որ երեխաները հեքիաթներ շատ են սիրում:Հեքիաթների միջոցով ևս կարելի է հասնել ցանկալի արդյունքների՝ իրականությունը և հեքիաթը համադրելով միմյանց հետ:Չէ որ հեքիաթները շրջակա աշխարհի անբաժանելի մասն են կազմում և որոշ թեմաների ուսուցումը կարելի է կապել հեքիաթների հետ կամ դրանց շուրջ հորինել հեքիաթներ:
- «Ամփոփման դասն ընթերցանությունից» թեման ուսումնասիրելիս եկանք այն եզրահանգման, որ ես և շրջակա աշխարհը առարկայի թեմաները ամփոփելիս դասի վերջում կարելի է կազմակերպել ամփոփիչ հարցադրումներ հետևյալ բովանդակությամբ՝ինչ գիտեինք նախքան թեման ուսումնասիրելը,ինչ հասկացանք թեմայի ուսումնասիրությունից հետո,որտեղ և երբ կարող ենք կիրառել ստացած գիտելիքները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում «Մեթոդական –մանկավարժական , գիտատեսական» ձեռնարկ,հրատարակչություն 1966թ, հունվար , «Սովետական մանկավարժ» ամսագրի հավելված՝Գ. Քոչարյան

2. Ջ. Ստեփանյանի գրադարանից